Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 թվականի ապրիլի 1-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/14

«Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2021 թվականի ապրիլի 1-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2021 թվականի ապրիլի 1-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1 Ջրթող հանգույցներում տեղակայված 50 հատ ULTRA-GSM սարքավորումների միջոցով առնվազն 15 րոպեն մեկ անգամ հաճախությամբ ջրի մակարդակի չափում և առնվազն 30 րոպեն մեկ անգամ հաճախությամբ տվյալների հաղորդում Կատարողին պատկանող Օբյեկտների մոնիտորինգային համակարգին:
Տեղադրված բոլոր սարքերը ինֆորմացիան հաղորդում են ժամը մեկ.
Հարց՝ արդյո՞ք նպատակահարմար է վերանայել սարքերի հաղորդումը 30 րոպեն մեկ:

Պարզաբանում N 1 . Ջրթող հանգույցներում տեղակայված սարքերից տեղեկատվության փոխանցման՝ հրավերում նշված 30 րոպեն մեկ անգամ հաճախությունը թելադրված է ջրային հոսքերի օպերատիվ կառավարման բավարար արդյունավետության ապահովման նկատառումներով, դրա վերանայման հնարավոր կլինի անդրադառնալ համակարգի հետագա գործունեության արդյունքների հիման վրա:

Հարցադրում N 2 Սարքավորումների պահապանում ասելով ի՞նչ նկատի ունեք:
Պարզաբանում N 2 Սարքավորումների պահպանում ասելով նկատի ունենք նրա ֆիզիկապես առկա և աշխատունակ վիճակի ապահովումը՝ տվյալների ստացման և հաղորդման իր ֆունկցիաների իրականացման համար:

Հարցադրում N 3 Խնդրում եմ հստակեցնել, արդյո՞ք ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպված է ՀՀ գնումների մասին օրենքի 15—րդ հոդվածի 6-րդ մասին հիման վրա, քանի որ հրավերի գնման ժամանակացույցում նշված չէ ծառայության մատուցման սկիզբը, ինչպես նաև պայմանագրի նախագծի 7.15 կետով սահմանված է, որ «Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով»:
Պարզաբանում N 3 Ընթացակարգի հրավերում ՀՀ գնումների մասին օրենքի 15/6 հոդված մասին դրույթը տեխնիկական վրիպակ է, այն կշտկվի բուն պայմանագրի նախագծում: Ընթացակարգի համար ֆինանսական միջոցներ նախատեսված են:

Հարցադրում N 4 Խնդրում եմ տրամադրել ULTRA-GSM սարքավորման տեխնիկական մասնագիրը կամ բնութագիրը:
Պարզաբանում N 4 Սարքավորումների տեխնիկական բնութագրերի պարունակությամբ ֆայլը ուղարկվել է էլեկտրոնային փոստին:

Հարցադրում N 5 Խնդրում եմ հստակեցնել՝ հրավերի տեխնիկական բնութագրում նշված մակարդակաչափերը ներկա պահին տեղադրված են, թե ոչ: Եթե ոչ՝ արդյո՞ք տեղադրումը պետք է

իրականացնի կատարողը և արդյո՞ք տեղադրման համար առկա են բոլոր անհրաժեշտ հարմարությունները:

Պարզաբանում N 5 Հիշյալ մակարդակաչափերը տեղադրված են եղել և հանվել են ձմեռային շրջանում: Կատարողի կողմից կրկին տեղակայումը չի ենթադրում որևէ մոնտաժման աշխատանքներ, բոլոր անհրաժեշտ հարմարություններն առկա են:

Հարցադրում N 6 Հրավերի տեխնիկական բնութագրում նշված է «Ջրթող հանգույցներում տեղակայված ULTRA-GSM սարքավորումների պահպանում», խնդրում եմ հստակեցնել նշվածի իմաստը՝ արդյո՞ք պահպանել նշանակում է, որ կատարողը պատասխանատվություն է կրում սարքավորումների 3-րդ անձանց կողմից գողության կամ ֆիզիկական վնասվածքի դեպքում, եթե այո՝ խնդրում եմ նշեք վերոգրյալից բխող բոլոր պատասխանատվությունները:

Պարզաբանում N 6 Սարքավորումների պահպանում ասելով նկատ ունենք նրա ֆիզիկապես առկա և աշխատունակ վիճակի ապահովումը՝ տվյալների ստացման և հաղորդման իր ֆունկցիաների իրականացման համար: Սարքավորման՝ նշվածից տարբերվող վիճակը կարող է հանգեցնել տվյալների փոխանցման ծառայության ոչ լիարժեք մատուցմանը, դրանից բխող, հրավերում թվարկվող պատասխանատվությամբ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Կ. Բարսեղյանին:

Հեռախոս՝ 012 74 00 77:

Էլեկտրանային փոստ՝ «sevan_hr.gnum@mail.ru»::

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-21/14 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով